

**ՄԱՏԵՆԵՐԵԿԱՆ****ԽՐԱՏ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ**

ԳՐ. ԽԼԱԹԵՑԻՄ ԾԵՐԵՆՑ

Խրատ ժամակարգութեանց, աղաքից եւ ձեռագրութեանց, հաստատակաց եւ առանձնութեան, ի Գրիգորե վարդապետէ:

Նախ պարտ է աստուածասիրաց ըստանալ հաւատաւ ուղիղս, որ ի սուրբ գիրքից կայ սուրբ հարցն. զի ամենայն հոգեւոր բարեաց հիմն դաւանութիւն է յԱստուած ճշմարտաւ եւ ի տնաւրէնութիւն Գրիգորե:

վանգներէ, կարծես իրենց զազարնակէսին կը հասնին Պապ Թագաւորի օրով:

Հակառակ իր երիտասարդ տարիքին, Պապ Արեւակունիներու երբեմնի միանեման հեղինակութիւնը վերահաստատած տեսնելու սեւեռուն մտով, փորձեց եւ ջանաց, հաստատակամ յամառութեամբ շարունակելու այս պայքարը, որուն մէջ իր հայրը Արեւակ կը մխրճուէր ի զին նոյնիսկ արիւնցի բախումներու հայ մեծամեծ իշխաններու հետ:

Պապ պիտի ընդարձակէր պայքարի նախքան աւելի քան իր հայրը: Եւ վերջ ի վերջոյ, տալով կռուի հրահրած մոլեռանդութիւնը պիտի մղէր իր հակառակորդները, հայ եւ օսաւ, դաւելու երիտասարդ Արեւակի կեանքին դէմ, ու այսպէս իր եղբրական վախճանով ալ պայքարը պիտի կորսնցնէր իր քովը:

Պապ սրտառուջ վերջին քաջարի խոյանքն էր քաղաւորական մահամեծ հարսութեան մը: Իսկով կը վերջանար Արեւակունիներու կեդրոնական հզօր քաղաւորութեան ի խնդիր գործը դրած յուսահատական, տագնապալի հակայ փորձը: Իրեն յաջորդող Արեւակունի քաղաւորներ, արտաքին քաղաքականութեան մէջ արդէն ենթակայ Սասանեան արեւելիքի, իսկ ներքին հակասի վրայ այլեւս առաւելապէս Լուսաւորչի ընտանիքի վերջին կորովի կարողիկոսէն, Սահակ Պարբեւէն, եւ անոր հաւատարիմ գործակից նախարարներէն

տոսի, որով փրկեցաքն, եւ ապա աղաքից հոգ տտանալ:

Եւ մեք պարտիմք զփափաք խնդրոյդ ձեր ընտել, զոր ի սուրբ եւ ի հոգեկիր արանց սահմանեալ կայ: Զի աւելորդ է ինձ ի վերա նոյնին բան յօղել, բայց զնոյնն ասասցուք համառաւտարաւ:

Անաւթն ընտրութեան Պապոս հրամայէ աղաքի առանց քարկութեան եւ երկմտութեան. եւ թէ լեզուաւ կամ յաղաթս հոգիս անպտուղ լինի, եւ ոչ ինչ աւելալմէ՝ Վասն որոյ զե բանս մտաւք ընտրեցի, քան զքաղաւմ բանս լեզուաւք:

Եւ Տէրն հրամայէ չլինել շատախաւս յաղաքիչին, եւ այս ոչ թէ զքաղաւմ աղաւթիւն արգելու, քանզի եւ ինքն զգի-

պիտի ստանային հրահանգ եւ ուղղութիւն, մինչեւ այն օրը երբ հնազանդեան պատկառելի այս արեւակեան հարսութիւնը, ծերունազարդ Սահակի հիւրերուն հակառակ, կը մեռներ, կարծես անոր բազուկներուն մէջ:

Պապի իրական ողբերգութիւնը, ոչ քի իր հսկման վայրագութեամբ սպանութիւն էր, այլ կուսակցամոլ կրֆ կ'ստանար պատմիչի մը ելոյթը, դժբախտ Արեւակի անհասկանութիւնը պարուրելու բունալից մեղսով մը որ դարեւ տեսնուէր:

Արդար է որ մեկզի վանեմք մեուր, ջանամք ծանօթանալ Պապի ժամանակաշրջանին եւ անոր անձին, իր առաւելութիւններով եւ պակասութիւններով:

Տարիներ առաջ, պարբերական մամուլի մէջ երեւցած յօդուածներս Արեւակ Բ. եւ Պապ քաղաւորներու մասին կը պարունակէին կարգ մը ժամանակագրական վրէպներ: Ներկայ աշխատութիւնս հիմնովին կը սրբազրէ զանոնք, արդիւնք յաւելեալ պրպտումներով:

Զորոյց դարը հայ պատմութեան ամենանախագահական մէկ դարն է, որու մահաբանութիւնն էր ընդարձակ պատմութիւնը, ի մեծ ողբերգութիւն հայ պատմագրութեան, դեռ գրի առնուած չէ:

Այդ պատմութեան գոնէ քանի մը էջերուն ծանօթանալու փորձն է որ կը կատարենք մեր այս գործով:

ՀՐԱՆԳ Գ. ԱՐՄԷՆ



չերն ի գլուխ հանէր յաղաթսն Աստուծոյ, մեզ ի խրատ, և դարձեալ թէ յամենայն ժամ արարէք աղաթս, այլ զվարպարս, և զմարմնաւորն, և զանցաւոր խնդիրն արգելցէ, որ լեզուաւն է միայն առանց մտաց:

Եւ աղաթից ուսուցանելն անհնար է, բայց թէ ի փորձոյ ուսցի. և կարի աշխատութեան պէտք է և արտասուաց՝ առնուլ զշնորհս աղաթից: Քանզի յերկուց է մարդս իմանալի և զգալի, պարտ է յորժամ աղաթել կամիցին մտաւք առ Աստուած վերանալ, և մարմինս՝ մտացն իր[ը]ն հովանի մարմնոյ ունել. յորժամ սա անդ ի յոտն կայ, որ է իմանալի միտքս, մարմինս աստ. և յորժամ նա անդ զձեռն ամբռնայ՝ սա ընդ նմին. և երբ նա խաւսի, և սա. քանզի ընդ մտացն պարտ է զմարմինն շարժել, և զամենայն ինչ որ մարմինն առանց մտացն առնէ՝ շատախաւսութիւն է և լեզուաւ աղաթել. քանզի իմանալի է Աստուած, և զիմանալի մտացն աղաթելն խնդրէ:

Զոր աւրինակ եթէ ոք առաջի իշխանի կացեալ՝ թէ ոչ զմիտսն յամենայն զգայութեանց յինքն ամփոփեալ խաւսեցի, փոխանակ պարզեւս առնելոյն՝ անարգի. ապա քանիւն առաւել առաջի Աստուծոյ կացեալ պարտիք զգուշութեամբ խաւսել, զի մի՛ փոխանակ պարզեւացն դատիք:

Նախ և առաջին գայտ զիտեա, զի պահպանութիւն կայ յԱստուծոյ առ մեզ առաւել ի քունն քան յարթութեանն, որպէս պատմի ի Սուրբ Գիրս: Բայց յորժամ արթնանամք խնդրէ ի մէջն աղաթիւք գոհանալ զանցեալն որ ամբողջ մնաց, և զառաջակայն զգուշանալ աղաթիւք, ըստ Տեառն հրամանին. յաղաթս կացէք շանկանել ի փորձութիւն:

Յորժամ հոգեւոր փողն հարկանի, և դու արթնանաս, իսկ և իսկ կնքեալ զքեզ նշանաւ խաչին, յիշելով զԱմենասուրբ Երրորդութիւնն, զի մի՛ դատարկ գտեալ զքեզ չարին՝ ծուլութիւն կամ այլ ինչ տկարութիւն զիցէ ի քեզ. այլ դու քաջապէս տրիացեալ զինեալ զքեզ:

Զոր աւրինակ յորժամ մարմնաւոր պատերազմին փողն հարկանի, քաջքն և պատերազմաւորն արիանան և պնդին, իսկ թոյլքն և վատքն լքանին, տրտմին և թուլանան. և նոքա ոչ միայն զինքեանս, այլ

և ընկերացն լինին դաւաժվոյն. նոյնպէս և սոքա՝ անձանց և ալոցն լինին յազուա:

Եւ յարուցեալ՝ աղաթելով երթիցես, և թէ ասեա՛ ինչ ասեմ այլ ինչ քան թէ զկարգեալ աղաթսն, որ առաջի կայ. քանզի ամենայն խորհրդով են, և Հոգւովն Սրբով կարգած զպիտոյն հոգւոյն և մարմնոյ:

ԶՏէր եթէ շրթունսն սկսեալ՝ ասելով գնացես, յորժամ ի տեղի աղաթիցն հացես՝ յատեանն զ ծունր կրկնեա, և յորժամ մտանես ի դասն, զ անդ կրկնեա, և զսկսեալ աղաթսն մի՛ թողցես մինչև տան դաւրնեա Տէրն:

Եւ թէ զիշերն կարգ լինի հանդիպել, յորժամ զարթնուցուս՝ կնքեալ զքեզ, բայց մի՛ աղաթեցես, այլ միայն Տէր ողորմեա ասելով անդադար մինչ ի ժամատունն. և արտասուաց ջանք զիր և յորժամ տա Աստուած, խոստովանեա և յայնժամ համարձակ աղաթեա:

Եւ յորժամ զհասարակացն սկսանին ի Տէր եթէ շրթունսն, ամէն փոխի զ ծունր, և ի Տէր ողորմեայքն լման ծունր, և յամենայն աղաթից վճարն ծունր:

Ի սաղմոսն ամենայն գուրգայի զ ծունր, Ալէլուիան և Թաղաւորին ոչ:

Ի ժամ զրոցն աղաչեմ աղաչեմ, ամենայնիւ զգաստացիր, և բաց զականջսդ ներքին, և մի՛ քնոյ և ծուլութեան տացես զքեզ, զի մի՛ անմասն մնացես ի բանիցն աստուածայնոց, և կամ թէ ի սրբոցն ճգանցն, որպէս և է ոմանց կուրուքին և համբուքին մտաց:

Յորժամ Հարցն ասի ամէն տան ծունր, և զործատանցն ոչ: Մեծացուցէին և Ողորմեային ծունր, և Տէր յերկնիցն ոչ:

Փառք ի բարձունսն կարի ահա և ջերմ սիրով կաց՝ յատեանն երթալով. զի յայտ տեղւով հանապազ շնորհս տա Աստուած երկիւղածաց իւրոց:

Բայց ի միաշարաթ զիշերն առաւել զգուշութեամբ պարա է աղաթել, յոտնկացութեամբ թէ կարող լինել յերկկոյեա հսկմամբ, և թէ ոչ՝ փոքր մի հանդիստ տալով մարմնոյն. զի պարզ մտաւք յառաւատն և ի պատարագն ժամանեցէ: Զի ոմանք տրտմին, տժգմին և յաւրանջին, զուր ախատին և ոչ առնուն վարձո, զի խաբէութեամբ և ոչ սիրով կան յաղաթս:

Ոմն ի սրբոցն ասաց, թէ ի միաշարա-



թուղ աւուրն, յարձակման գիշերային հրակ-  
մանն, տեսանէի զՔրիստոս յատենի յաթոռ  
փառաց նստեալ, և պարզեւս բաժանէր.  
որ յերկոյնէն էր աշխատել՝ ոսկի տայր, և  
որ ի մէջ գիշերին՝ արծաթ, և որ յառաւու-  
տին՝ պղինձ, կիտցոյ ոչ ինչ: Եւ զայս ասէր,  
թէ զլաբաթուն հոգեւոր պարզեւս՝ ի կի-  
րակի առնուն երկիւղել աղաթաւդքն:

Եւ զարձեալ ասէր թէ յորժամ զնշան  
խաչին յերեսս կերպարանէի, տեսանէի իր-  
բն զլոյս յաւոյս վերանայր, և զխաւարա-  
յին գունդն ցրէր: Կանս որոյ պարտ է դա-  
մենայն զգայարանս սոփաւ պարսպել:

Եւ որժամ յառանձնականն ժամանեսս,  
կնքեա զքեզ ասելով. Հայր Սուրբ Աստու-  
ռած ճշմարիտ, սրբեա զմիտս իմ. Որդիդ  
Սուրբ Աստուռած ճշմարիտ, սրբեա զմար-  
մինս իմ. Հոգի Սուրբ Աստուռած ճշմարիտ,  
սրբեա զհոգի իմ: Ամէնօրհնեալ Սուրբ Եր-  
րորդութիւն, սրբեա զգայութիւնս իմ, և  
չնօրհնեա ինձ ի հաճոյս քեզ աղաթել:

Եւ ի Հարցնէն սկսեալ մինչև զՍրբեա-  
ղային վճարեա՝ ասա քարոզիւքն և աղաւ-  
թանովքն, զի յոյժ խորհրդիւ են եղեալ, մի՛  
ծանր թուեսցի. զի թէ Հափեա՝ կէս կանոնի  
չափ է: Եւ թէ կամիս սաղմոս ասել, զան-  
ցել ժամուն գիշերին յորժամ զաւրհնեայն  
ետուն և դու թողեր անտի սկսիր: Եւ յա-  
մենայն առանձնական սաղմոսի, յամենայն  
գորդայ զլուս պաղատանս արասցես, զի  
սաղմոսին՝ չէ՝ տիրապէս աղաթել, այլ  
միայն զի հաւաքեսցի միտքն ի ցնորմանէ.  
և ծունր սաղմոսին որպէս և զրեցաւ:

Երրորդ ժամուն զիւր սաղմոսն և զքա-  
րոզն և զաղաթանս որ պահոցն կու ասեն.  
յամենայն աւր պարտ է ասել, զի խորհրդով  
է և քրիստոսադիր աւանդ. նոյնպէս և զվեց  
ժամուն յիւր ժամն, և զինն ժամուն յիւրն:

Իսկ ի ժամ պատարագին յեկեղեցոյն  
ի զուրս մի՛ կենար ծուլութեամբ, բայց թէ  
իրք լինի հանդիպիլ. զի ամենայն աղաւ-  
թից ժամանակ գերագոյն է, բայց այս կարի  
սարսափման. զի այժմ բա՛ց են դրունք  
ողորմութեան, և բաշխի առատապէս պար-  
զն խնդրողացն յուսով և արտասուաւք:  
Թէ այլք պատարագեն՝ դու պաշտուն տար  
և աղաթեալ անիւ, և մի՛ անյուսարար հե-  
ռանար, չգիտեիով զչա՛հ աւգոսին, և մի՛  
աներկիւղարար մերձենար, զի մի՛ դատա-  
տան արասցես անձին:

Եւ թէ կարեա՝ յառաջ քան զգիշերային  
ժամն աղաթեալ արտասուաւք. քանզի  
սուրբ վարդապետն Թուժայ աշպէս էր  
սահմանել, բայց մեք ի կամս ապաստան  
արարաք: Այլ յառաջին ժամէն մինչև պա-  
տարագեսցես մի՛ յոք խաւեսցիս, և մի՛  
ննջեսցես, կամ այլ ծուլութեան տացես  
զքեզ, այլ զհասարակաց և զառանձինն  
անիւ և արտասուաւք արասցես: Եւ ի ժամ  
խորհրդոյն զինչ ասացից, հա՛ն գիտութեան  
և ընտրութեան ժամանակ, սարսափման,  
ըղձից, արտասուաց, յուսոյ և հաւատոյ,  
զի մի՛ կենացն դեղ՝ մահու լեալ դատեցէ:  
Մի՛ տգիտութեամբ և աղանդի խորհրդով,  
մի՛ ի հարկէ կամ մարդահաճութեամբ, մի՛  
յաղագոս աղահաճութեան, այլ բազում զգու-  
շութեամբ որպէս զրեցաւ՝ պատարագեա  
զՔրիստոս, յաղագոս անձինդ և ամենայն  
աշխարհի: Մի՛ տգիտութեամբ միոյ մեռե-  
լոյ տացես՝ և զկենդանիս՝ և զայլսն զրկես-  
ցես: Զի պատարագն կենդանեաց է առա-  
ւել՝ քան մեռելոց, որպէս բա՛ք պատա-  
րագին ուսուցանեն, և այն՝ յոյս և հաւատ  
ունողաց է, և ո՛չ որ զբամ տայ ինչ:

Դարձեալ պարտ է գիտել թէ ո՞ր բան  
ի Հայր է, կամ ո՞ր յՈրդի. կամ ո՞ր ի Հո-  
գին. և թէ մինչև ցո՞ր վայր աւրինակ է,  
և կամ ցո՞ր վայր ճշմարտութիւն. վասնզի  
գործ աստուածային է. զանց արասցես  
զերկ[ւր]աւորաւքս, նա և զերկնաւորաւքն  
ևս, առաջի Հաւր կալով, ի զիրկս ունելով  
զՈրդին իբր թէ ասելով. Աստուած Հայր,  
հայեաց ի սորա պատառեալ կողս և ի տե-  
ղիս բեւեռացն. և զի Աստուածս ճշմարիտ  
մարդ եղև և աղատեաց զմարդկային բնու-  
թիւնս ի դժոխոց, ի մեղաց, և ի դիւաց:

Ահա, եղբայր, աստի ուսիր զխոր-  
հրդոցս զաւրութիւն, զի ի ժառանցն մի  
բան բաւական է զբաղումս իմանալ: Մի՛  
շատ, զի մի՛ արուեստ լիցի. յամենայն  
շարաթ մի աւր բաւական է: Եւ յետ պա-  
տարագին զառանձին կարգն մի՛ թողուլ  
զամենայն ժամու կարգեալսն, և մի՛ դա-  
տարկութեան տալ զքեզ, և ո՛չ բնաւ ննջել,  
զի պիղծ է և անտային. կարգա՛, ձեռագործ  
արա, բայց մի՛ խաբիս ի գործոյն կամ ի  
կարդալոյն, և զաղաթից ժամանակն խա-  
փաներ, կարծելով թէ այս այլ աղաթք է.  
զի կարդալն՝ ուսուցիչ է, և աղաթքն  
գործ, և ձեռագործն՝ ծուլութեան և դա-



տարկութեան խափանիչ: Թէ աղաւթիս առանց կարգաւոյ՝ աղիտութիւն է և անբանութիւն, և չէ ընդունելի: և թէ միայն կարգաս առանց աղաւթից՝ ծուլութիւն է և անհաւանութիւն, զի ոչ հաւատաս զբոց զոր կարգաս: զի ամենայն զիրք՝ յիս զիտութեան, և զաղաւթին և զարբութիւնն անձինն ասեն: Եւ յորժամ յինն ժամն աղաւթն՝ կերակուր ճաշակէ, զի ի Զատկէն մինչ ի Խաչն այս է ժամ ճաշակելոյ, զի մեծ է աւրն: և ի Խաչէն յետոյ ի մտանել արեգականն:

Եւ ի ճաշակելն ահա լիցի և զոհութեամբ, զի ի Տեսնէ աւանդեցաւ: առեալ զհացն զոհացաւ: զ անգամ աւրհնեա, սաղմոս և քարոզ՝ որպէս կարգեալ է: յառաջն Սուրբ զԵրրորդութիւնն, ապա զնշան տէրութեան, և զկնի ճաշակմանն զՍուրբ զԱստուածածինն, և նովա զիւր միածինն, զի այսպէս ասեն ի Թեղեմիս: և Սուրբ Անտոն և այլ Սուրբ Հայրքն: Ժբ ծունդր կրկնէին յառաջ քան զճաշելն, և զկնի նոյնպէս:

Յերկային ժամն խոնարհեցոյ ծնդորով, ապրեցոյին՝ ո՛չ: Համբարձին ծնդորով, և սաղմոս փոխերն բնաւն ծնդորով, և ամենայն աղաւթից վերջ ծուր որպէս զրեցաւ:

Խաղաղականին և ի քնոյն ժամն՝ բազում աղաւթից, ծնդորոց և աշխատութեան պէտք է: զի խաւարայինքն ի գիշերի բազում ցնորք յարուցանեն, որպէս Տէրն ասէ: Եթէ ոք զնայ գիշերի՝ գայթակղի՝ եթէ լոյս աղաւթից չունիցի ընդ իւր: Բայց վա՛յ ինձ, թէ մեք քանի զանդաղանաւք աղաւթեմք: վասն որոյ ի քունն բազում դառնութեամբ հանդիպումք:

Աղաչեմ վասն Տեսնն, մի՛ շտապով, մի՛ ծայրատ, և մի՛ ծուլութեամբ, զի մի՛ շարն անպատշաճ խորհուրդ անկեցէ ի մեզ կամ զործ, և մի՛ մահու սպասեցէ՝ անպատրաստ գտեալ զմեզ, կամ զիւսհարութեան կարծիս տացէ: այլ աղաւթեա երկուգիւ, և հնարեա արտասուաց, և զարարին Աստուած յաւգնութիւն կոչեա, և առանց Աւետարանի մի՛ ննջիր, թէ գրով թէ ի բերան, և զՎ կողմն տանն, զառաստաղն և զատակն կնքեա նշանաւ խաչին, և զմիտոս և զգայութիւնս ի սէր Տեսնն բեւեռեա, և աներկիւղ ննջեա, ի փառս նորա որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն:

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Ձեռ. Թ. 343

## ՊԵՂԵՍՏԻՆԵՅՐԵԿԵՆ

### ՄԵՌԵԱԼ ԾՈՎԸ

1. — Պատմութիւնք. — 2. — Կազմութիւնք. — 3. — Նուարկութիւնք և ուսումնաւորութիւնք. — 4. — Մեռեալ ծովուն շրջակայ Ս. Դրակոն վայրերը:

1. — Պատմութիւնք. — Ս. Դրքին մէջ, այս ծովուն առաջին յիշատակութեան կը հանդիպինք նահապետական շրջանին, Սոգոմ և Դոմոր քաղաքներու կործանման ժամանակ: Այս ծովը, որ երկրագունտին ամենէն ցած մակարդակին վրայ կը զբառնուի, քանի մը յառկանշական անուններով յորջորջուած է պատմութեան մէջ, սակայն իր բուն և Ս. Դրակոն անունն է Ազի ծով կամ Արապայի ծով (Յորդանանի հովտին հարաւային վերջամասը) կամ Արեւելեան ծով, Ազաից ծով, ևն. «ի ձորն ազի, որ է ծով աղալից» (տե՛ս Ծննդ. ԺԴ. 4, 10, Թիւք 1Դ. 3, Բ. Օր. Գ. 17, Յեսու Գ. 16, և այլն):

Յովսէփոս պատմագիր Ասիականայ ծով կը կոչէ զայն, թիւրեւ նկատի ունենալով անոր կայրեայ և կալուս հանգամանքը: Այժմու գործածական անունն է Ղովտի ծով (Պահլը-էլ-Լուի) որ՝ Արրահամ նահապետին հօրեղբորորդի Ղովտի անունը կ'ոգեկոչէ, կը կոչուի նաև (Պահլը-էլ-Միյէթ) Մեռեալ ծով:

Մեռեալ ծովուն անունն և յիշատակութեան կը հանդիպինք նաև Հելլեն գրականութեան մէջ Պաւսանիասի(\*) և Գաղիանոսի կամ Կալիէնի(\*\*) գործերուն մէջ:

Այս ծովը ընդհանրապէս քիչ նաւարկելի եղած է, նկատի ունենալով ջուրերուն

(\*) Պաւսանիաս, յոյն անուանի աշխարհագիր և պատմագիր հեղինակ մըն էր Բ. դար Յ. Բ. Ի, որ Յունաստանի մասին Ուղիղգիրք մը գրած է, որ Յունաստանի մէջ գտնուող հնութիւններու և հին ու կարեւոր յիշատակարաններու մասին կարեւոր տեղեկութիւններ կան:

(\*\*) Գաղիանոս կամ Կալիէն (Galien). յոյն երեւելի և աշխարհաչափ մարդագիտագէտ մըն էր (Յ. Բ. 131-210), որ մարդագիտութեան մէջ կարեւոր դիւտեր կատարած է: